ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ VII, № 2, 1954 Биол. и сельхоз. науки

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մ. Մ. Խորայելյան

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԵՎ ԱՄՍԱԿԱՆ ԲՈՂԿԻ ՀԱՄԱՏԵՂ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՍՄԿՊ Կենտկոմի Սեպտեմբերյան պլենումը, ելնելով ժողովրդական տնտեսության շահերից և սովետական ժողովրդի նյութական բարեկեցության հետագա բարձրացման խնդիրներից, գյուղատնտեսության աշխատողներից պահանջում է էլ ավելի բարձրացնել գյուղատնտեսության կուլտուրաների, այդ թվում կարտոֆիլի ու բանջարեղենի արտադրությունը և խոշոր քաղաքների մերձքաղաքային գոտիներում ստեղծել կարտոֆիլի և բանջարեղենի բազաներ, դրանով իսկ գյուղատնտեսությունը դարձնել բարձր ապրանքային և եկամտաբեր։

Այդ պահանջները կատարելու, ինչպես նաև բարձր և կայուն բերք ապահովելու համար, մեծ նշանակություն է ստանում համեմատաբար պակաս ծախսեր պահանջող նոր ագրոմիջոցառումների կիրառումը։ Այդպիսի ագրոմիջոցառումներից մեկը կարող է հանդիսանալ կարտոֆիլի և ամսական բողկի համատեղ մշակությունը։

Ինչպես հայտնի է, ամսական բողկը, ճակնդեղը, շաղգամը և նման մի շարք կուլտուրաներ պատկանում են արմատապտուղների տեսակների շարքին։

Արմատապտուղներն ըստ Ա. Ի. Սաժինի տվյալների [1] պարունակում են մարդու սննդի համար անհրաժեշտ ածխաջրեր (շաքար և օսլա), սպիտակուց, հանքային աղեր (երկաթ, կալցի), վիտամիններ ու արոմատային նյութեր։

Արմատապտուղների սորտերն ըստ իրենց գործածության բաժանվում են երեք խմբի՝ սեղանի, գործարանային և անասնակեր, իսկ ըստ վեգետացիայի՝ լինում են վաղահաս, միջահաս և ուշահաս։ Ամսական բողկը՝ ինչպես ցույց է տալիս իրեն անունը պատկանում է վաղահասների խմբին։

Ամսական բողկը ըստ Վ. Ի. Էգելշտեյնի տվյալների [2] ցրտադիմացկուն միամյա բույս է, նրա սերմերը կարող են աճել +2-ից +3°C. ջերմության պայմաններում։ Տալիս է արմատապտուղ և սերմ։ Նրա սերմերի մասսայական ծլումը լինում է ցանքից 3—5 օր հետո։ Վեգետացիոն շրջանը կարճ է լինում 30—45 օր։ Հանդիսանում է շատ վաղ բանջարեղեն և մանում է բաց գրունտում առաջինը։ Ամսական բողկը վեգետացիայի ընթացքում պահանջում է մեղմ, խանավ կլիմա և լույս։ Նրա արմատապտուղը աճում է հողի մեջ։ Պահանջում է լավ մշակված, փուխր, բուսահողով հարուստ կավավազային և ավազակավային սեւահողեր։

Ամսական բողկը վատ է տանում [3] բարձր ջերմաստիճանը, հատկապես կապված չորության հետ. այդպիսի դեպքում ստացվում է դառը, ոչ հյութալի, փայտացած, մեջը փուչ արմատապտուղներ։

Ամսական բողկը պետք է ցանել վաղ գարնանը և ուշ ժամկետում՝ օգոստոսի երկրորդ կեսից։

Կարտոֆիլի կուլտուրայի վեգետացիայի շրջանը ավելի երկար է համեմատած ամսական բողկի հետ։

Կարտոֆիլի ծիլը հողից դուրս է գալիս ավելի ուշ, տնկումից մոտ 25—30 օր հետո, երբ հողի 10 սմ խորության մեջ լինում է 7—8°C ջերմություն [4]։

Ուսումնասիրելով երկու տարբեր տեսակներին պատկանող բույսերի ամսական բողկի և կարտոֆիլի կուլտուրայի բիոլոգիական առանձնահատկությունները, մեր կողմից պարզվեց, որ վեգետացիայի ընթացքում այդ երկու տարբեր կուլտուրաները միմյանց չեն խանգարում. այդ առումով մեր առաջ հարց առաջացավ, որ այդ երկու տարբեր կուլտուրաների համատեղ մշակվելը հնարավորություն կտա միևնույն հողամասից նույն ժամանակամիջոցում վերցնելու երկու բերք։

Ամսական բողկն աճելով կարտոֆիլի կուլտուրայի հետ միասին, բոլորովին չի խանգարում նրա աճմանն ու զարգացմանը։ Մեր կողմից կատարված ֆենոֆազոլոգիաները ցույց են տվել, երբ կարտոֆիլի պալարների ծիլերը հողից նոր են դուրս եկել և ունեն մատաղ տերևներ, ամսական բողկի հիմնական բերքահավաքը այդ ժամանակամիջոցում հիմնականում արդեն ավարտված է լինում։

Արարատյան հարթավայրում ամսական բողկի մշակությունը նոր չէ. սովորաբար այդ կուլտուրան գրպանցնում է առանձին հողամաս։

Ամսական բողկի և կարտոֆիլի համատեղ մշակման այս ագրոմիջոցառումները մեր կողմից փորձարկվել է մի քանի տարիներ։ Արարատյան հարթավայրում Դիտությունների ակադեմիայի կարտոֆիլարուծության բաժնի փորձնական հողամասում սկսած 1945 թվականից։ Այդ նպատակով, վերջին երեք տարիներում, մեր կողմից կատարվել է փորձնական ցանք։ Փորձի համար գարնանը փորձադաշտում առանձնացվել է, ըստ առանձին տարիների 200—250 քմ հողակտոր, որտեղ կատարվել է 25—30 սմ խորությամբ ցրտահերկ։ Գարնանը, հողի քիչի ժամանակ, կատարվել է 13—15 սմ խորությամբ կրկնավար։ Վաղ գարնանը՝ մարտին, մարգերի մեջ տնկել ենք կարտոֆիլ՝ միջշարքային տարածությունը եղել է 70 սմ, իսկ բույսերի միջև 30 սմ և այդ ցանքի վրա անմիջապես ցանվել է ամսական բողկ։ Մարգերի երկարությունը եղել է 25—30 մետր, իսկ լայնությունը՝ 2 մետր 10 սմ, ըստ առանձին տարիների ամսական բողկի բերքահավաքը կատարվել է մայիսի 1-ից մինչև մայիսի 6-ը, իսկ կարտոֆիլինը՝ հուլիսի 16-ից մինչև 20-ը. ստացվել է հետևյալ արդյունքները՝ տես աղյուսակ № 1։

Մի քանի տարիների մեր կողմից կատարած ուսումնասիրությունների ու դիտողությունները ցույց են տվել, որ Արարատյան հարթավայրում կարտոֆիլի կուլտուրայի և ամսական բողկի համատեղ ցանքի միջոցառումը, սովորական ցանքի համեմատությամբ ունի մի շարք առավելություններ, այն է՝

Աղյուսակ 1

Երեք տարիներում ստացված ամսական բողկի և կարտոֆիլի միջին բերքատվություններ կիլոգրամներով

Կուլտուրաների անունը	Բերքատվությունը 100 մ² հողատարածությունից կիլոգրամներով		
	1951	1952	1953
Ամսական բողկի «Կարմիր»—վերջագիրը սպիտակ, հասունանում է 30—35 օրում	91	83	98
Կարտոֆիլ «Լորիս»	125	136	154

1. Հնարավոր է լինում վաղ գարնան ժամանակ բնակչությանը մատակարարել թարմ բանջարեղեն և բարձրացնել տնտեսության ապրանքայնությունը։

2. Ամսական բողկը իր վեգետացիայի ընթացքում բոլորովին չի խանգարում կարտոֆիլի բույսի աճմանն ու զարգացմանը։ Մինչև որ կարտոֆիլի պալարներն սկսում են ծլել հողից, այդ ժամանակամիջոցում գրեթե ավարտված է լինում ամսական բողկի հիմնական բերքահավաքը։

3. Տնտեսվում է հողատարածությունը և մեկ միավոր տարածությունից ստացվում է երկու բերք (կարտոֆիլ և ամսական բողկ)։

4. Հողամասը համեմատաբար զերծ է մնում մոլախոտերից։

5. Հողի մակերեսը չի կեղևակալում, որը շատ կարևոր է ծլող կարտոֆիլի բույսի համար։

Ամսական բողկի և կարտոֆիլի կուլտուրայի համատեղ ցանքը հնարավոր է լայն չափով արմատավորել, ինչպես Արարատյան դաշտավայրում, այնպես էլ նախալեռնային և լեռնային պայմաններում։

ՀՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի կարտոֆիլի
լաբորատորիա

Ստացվել է 3 XII 1953 թ.

ЛИТЕРАТУРА

1. *Сажин А. И.* Столовые корнеплоды, 1940.
2. Проф. *Эдельштейн В. И.* Колхозное овощеводство, 1949.
3. Проф. *Эдельштейн В. И.* Овощеводство, 1951.
4. Տեր-Սահակյան Տ. Ա., *Կարտոֆիլի կուլտուրան Արարատյան հարթավայրում, 1943։*

М. М. Исраелян

Совместное возделывание картофеля и редиски

Резюме

В деле снабжения городского населения ранними овощами важное значение имеет совместное возделывание картофеля и редиски. Исследования, проведенные лабораторией картофелеводства Ака-

демии наук Арм. ССР в период 1951—1953 гг., привели нас к следующим выводам:

1. Становится возможным снабжать население ранней весной свежими овощами, что способствует повышению товарности пригородных колхозов.

2. Вегетационный период редиски почти не мешает разведению и развитию картофельного растения. За период появления всходов картофеля почти завершается основной сбор редиски.

3. За одну вегетацию с единицы площади получается два полноценных урожая (картофель и редиска). Освобожденный участок из-под этих культур вполне возможно использовать вторично (в условиях Араратской равнины) для возделывания пожнивных культур.

4. Совместное возделывание культуры картофеля и редиски возможно в широких масштабах внедрить в условиях Араратской равнины, а также возможно производить производственный опыт в предгорной и горной зонах республики.